

Հայտարարություն

Լոռու մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

Լոռու մարզպետարանը հայտարարում է արտաքին մրցույթ՝ **Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի (ծածկագիր՝ 95-1.5-Ղ4-1)** քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի (ծածկագիր՝ 95-1.5-Ղ4-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկավորությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք ծանոթանալ [այստեղ](#), [այստեղ](#) և [այստեղ](#):

Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի (ծածկագիր՝ 95-1.5-Ղ4-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ ՀՀ Լոռու մարզպետարան (ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, 1) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (ձևը լրացվում է տեղում),
2. անձնագիր և/կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք՝ կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ՝ պատճենով կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայական՝ պատճենով,
6. մեկ լուսանկար՝ 3X4 չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2020 թվականի նոյեմբերի 20-ից մինչև 2020 թվականի նոյեմբերի 30-ը ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը 10:00-ից 12:30-ը և 14:30-ից 17:00-ը:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2020 թվականի դեկտեմբերի 30-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ Լոռու մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, 1):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2021 թվականի հունվարի 11-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ Լոռու մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, 1):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 256623 (երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, նախաձեռնող և ունենա պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- **Սահմանադրություն.** հոդվածներ՝ 1,5, 6, 10, 17, 21, 44, 46, 58, 64, 66, 70, 72
հղումը՝ [այստեղ](#)
- **«Քաղաքացիական ծառայության մասին»** Հայաստանի Հանրապետության օրենք, հոդվածներ՝ 4, 5, 6, 7, 10, 11, 12, 19, 20, 21, 24, 33, 38
հղումը՝ [այստեղ](#)
- **«Հանրային ծառայության մասին»** Հայաստանի Հանրապետության օրենք
հոդվածներ՝ 2, 5, 6, 7, 8, 9, 14, 17, 31
հղումը՝ [այստեղ](#)
- **«Դեղերի մասին»** Հայաստանի Հանրապետության օրենք, հոդվածներ 5, 8, 14, 15
հղումը՝ [այստեղ](#)

- «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, հոդվածներ 1, 2, 3, 4, 6, 7, 8, 9, 11, 14, 23, 24
հղումը՝ [այստեղ](#)
 - «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, հոդվածներ 1, 9, 13, 16
հղումը՝ [այստեղ](#)
 - «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
հոդվածներ՝ 5, 10, 17, 19, 20, 21, 33, 36
հղումը՝ [այստեղ](#)
 - «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
հոդվածներ՝ հոդվածներ՝ 2,5,6,7,13,14,15,18,19,22,26,35,36
հղումը՝ [այստեղ](#)
 - «Աշխատակազմի կառավարում» կոմպետենցիա,
հղումը՝ [այստեղ](#)
 - «Խնդրի լուծում» կոմպետենցիա,
հղումը՝ [այստեղ](#)
 - «Որոշումների կայացում» կոմպետենցիա,
հղումը՝ [այստեղ](#)
- Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղզաշյան: Երևան 2012, §1.1- 2.3
հղումը՝ [այստեղ](#)
- Ինֆորմատիկա 8-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղզաշյան:Երևան 2013, §1.1- 2.2,
հղումը՝ [այստեղ](#)
 - «Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, Էրրորդ լրամշակված հրատարակությունում, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012 թ., էջեր՝ 224, 226, 258
հղումը՝ [այստեղ](#)

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ <https://www.gov.am/am/announcements/item/346/> հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից, մասնավորապես՝

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել ՀՀ Լոռու մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, 1, հեռախոսահամար՝ 0322-2-10-24, էլեկտրոնային փոստի հասցե՝ lori.andznakazm@mta.gov.am):

Թեստի ձևանմուշը կցվում է՝ [այստեղ](#)